ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1827 - Ա **31 մարտի 2009թ.**

ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 27 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՖԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ, ԱՐՍԵՆ ՍԱՐԳՍԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ, ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Օֆիկ Սուրենի Ոսկանյանի (ծնված 16.08.1939թ.), Արսեն Սարգսի Ոսկանյանի (ծնված 26.02.1963թ.), Նորայր Սարգսի Ոսկանյանի (ծնված 19.01.1966թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Բաշինջաղյան փողոցի 1-ին նրբանցքի հ. 27 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 479.01քմ, որից 390քմ մակերեսով հողամասն Օֆիկ Սուրենի Ոսկանյանին, Արսեն Սարգսի Ոսկանյանին, Նորայր Սարգսի Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 89.01քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1996 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշեն տարածքային ստորաբաժանման 21.11.2008թ. հ. 6851, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 26.03.2009թ. հ. 20/2-Ե/153 գրությունները, 25.09.2008թ. ժառանգության իրավունքի վկայագրերը, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 17.03.2009թ. հ.20-Ել-1843 եզրակացությունը, համաձայն որի Բաշինջաղյան փողոցի 1-ին նրբանցքի հ.27 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ. 2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Բաշինջաղյան փողոցի 1-ին նրբանցքի հ.27 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Օֆիկ Սուրենի Ոսկանյանի, Արսեն Սարգսի Ոսկանյանի, Նորայր Սարգսի Ոսկանյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 390քմ մակերեսով հողամասին կից 89.01քմ

մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 89.01քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշեն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Բաշինջաղյան 1-ին նրբանցքի հ.27 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Բաշինջաղյան փողոցի 1-ին նրբանցքի հ.27 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավիթաշեն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Օֆիկ Սուրենի Ոսկանյանի, Արսեն Սարգսի Ոսկանյանի, Նորայր Սարգսի Ոսկանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Աջափնյակ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**